ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

04.12.2023 N 06/01.2/15952-2023

ՀՀ Կոտայքի մարզ,
Աբովյան համայնքի ղեկավար
պարոն Էդուարդ ԲԱԲԱՅԱՆԻՆ

2023 թվականի հոկտեմբերի 27-ի
N Ե-6874 գրություն

Հարգելի պարոն Բաբայան

Ձեզ է տրամադրվում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Գեղաշեն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 07-023-0194-0056 կադաստրային ծածկագրով 0.05 հա մակերեսով հողամասը գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահողից, բնակելի տուն կառուցելու համար, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողերի փոխելու առաջարկության վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կարծիքների ամփոփ տեղեկանքն ու դրական եզրակացությունը:

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 30-րդ մասի պահանջները՝ նշված փոփոխությունն անհրաժեշտ է արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Գեղաշեն բնակավայրի գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները և գլխավոր հատակագծի վերը նշված փոփոխությունը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման քաղվածքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում տրամադրել մեզ:

Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է վերը նշված փոփոխությունն ընդգրկել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակվող ՀՀ Կոտայքի մարզի Կոտայք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծում ներառված Գեղաշեն բնակավայրի փաստաթղթում:

Առդիր՝ 2 ֆայլ:

Հարգանքով՝

Նունե ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստորագրված է էլեկտրոնային ստորագրությամբ

Ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ
Հովիկ Դավթյան, հեռախոս՝ 011 621 725,
Կատարող՝ Լիլիթ Պալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ Պ-2667
05 12 2023 թ.